

1439  
1440  
1441

83  
2-73

45



2011

83

7-73

ԱՀ

9.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆոնադրություն

ԿԱՍ

# ԿԱՄԱՐԴԻԱՆԾ ՊՐԻՆՑ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ - ՎՈԴԵՎՈՒԼ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱՆՑ

ԹԱՐԴՄԱՆԵՑ

ԿԱՄԱՐ ՏԵՐ-ԴԱԿԹԵԱՆՑ



1854

ԹԻՖԼԻՍ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԵԼԵՅՆ ՓՊՂԱՑ, 5

1882

2003


281  
282

ԹԱՅԱՐԱԿԱՆ ՓԱՌԱՐԱՐԱՄ

Ա Ա Բ

# ՅՈՒԹ ՇԱՀԱԳՎՈՒՅԻ

ԽՈՐԱԿԱՆ ԽՈՐԱԿԱՆ ԽՈՐԱԿԱՆ ԽՈՐԱԿԱՆ



Հազարամաս կայութեան գովազարդում  
Հազարամաս կայութեան գովազարդում  
Հազարամաս կայութեան գովազարդում  
Հազարամաս կայութեան գովազարդում

Հազարամաս կայութեան գովազարդում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՍՏ Վ ՏԵԼԵԳՐԱՖԻ ԱԿԱԴԵՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԻՒՐ ԲԱԶՄԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐ

ՍԱՄԱԿՈՒՅՈՒՆ ՄԵԺԱՊԱՏԻՔ ՊԱՐՈՒՅՐ

## ՅՈՎԿԱՆՆԵՍ ԶՈՒԱԼԵԱՆՑԻՆ

ՅՈՎԿԱՆՆԵՍ ԶՈՒԱԼԵԱՆՑԻՆ  
ՅՈՎԿԱՆՆԵՍ ԶՈՒԱԼԵԱՆՑԻՆ  
ՅՈՎԿԱՆՆԵՍ ԶՈՒԱԼԵԱՆՑԻՆ  
ՅՈՎԿԱՆՆԵՍ ԶՈՒԱԼԵԱՆՑԻՆ

ՅԵՐԱԽՏԱԳԵՏ ԱՐՏԵ

## ՆՈՒԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՍՏ Վ ՏԵԼԵԳՐԱՖԻ ԱԿԱԴԵՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՍՏ Վ ՏԵԼԵԳՐԱՖԻ ԱԿԱԴԵՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՍՏ Վ ՏԵԼԵԳՐԱՖԻ ԱԿԱԴԵՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՍՏ Վ ՏԵԼԵԳՐԱՖԻ ԱԿԱԴԵՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Բ Ա Ր Գ Մ Ա Ն Չ Ի Ց

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՍՏ Վ ՏԵԼԵԳՐԱՖԻ ԱԿԱԴԵՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՍՏ Վ ՏԵԼԵԳՐԱՖԻ ԱԿԱԴԵՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՍՏ Վ ՏԵԼԵԳՐԱՖԻ ԱԿԱԴԵՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՍՏ Վ ՏԵԼԵԳՐԱՖԻ ԱԿԱԴԵՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆԸ

ՀԵՐՄԱՆ,	ԵՇԽՈՂ Պըհնց . . . . .	Պ.	ԶՄՇԿԵԱՆՅ
ԿՈՄՍ-ՖՈՆ-ԼԱՌԻՑԻ,	Նորա բարեկամը	Պ.	ՍՈՒՐԲԻԱՍԵԱՆՅ
ԲԺԻՇԿ	. . . . .	Պ.	ԱՒԱԼԵԱՆՅ
ԱՏԵՆԱ.ՊԵՏ	{ Պըհնցի պալատականներ	Պ.	ՍԱՐԴԱՐԵԱՆՅ
ՍԵՆԵԿԱ.ՊԵՏ	. . . . .	Պ.	ՄԱՆԴԻՆԵԱՆՅ
ՀԵՐՏՐՈՒԴՅԱՅ, ԽԵՂՃ Կոշկարի որբեւ-			
այրի կին . . . . .	S.	ՍԱԹԵՆԻԿ-ԶՄՇԿԵԱՆ	
ՀԱՆԱ, ոռըա որդին, Կոշկարու . . . Պ.	S.	ՏԵՐ-ԴԱՒԹԵԱՆՅ	
ՄԱՐԴԱՐԻՏ, Պալատի վերակացուի աղ-			
ջեկ . . . . .	ՕՐ.	ՍԻՐԱՆՅՅ	
Լ.ՕՏԻՔՆ, նոյա աղախէն . . . . .	ՕՐ.	ՎԱՐԴՈՒՀԻ	
Լ-ին Ծառայ. . . . .	Պ.	ԱՂԱՅԵԱՆՅ	
Հ-դ Ծառայ . . . . .	Պ.	ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՅ	
Պալատական ասպետ, տիկին, որսորդ զինուորներ և ծա-			
ռայք:			

Գործողութիւնը կատարվում է մի գերմանական փոքրեկ քաղաքի մէջ, մայքաքաղաքի մօտը: 1-ին և 3-դ գործողութիւնները կատարվում են կոշկարի գործատան մէջ, իսկ 2-դ գոր-

ծողութիւնը Պըհնցի պալատումը:

Առաջին անդամ Հայ դեղասանական մշտական խումբը ներկայացրեց Թիֆլիսի քաղաքական թատրոնում 1880 ամբ Մարտի 20-ին:

## ԱՐԱՐՈՒԱԾ ԱՐԱՋԻՆ

Կոշկարի գործատում: Մի մահճակալ և մի քանի աթուներ, աջ կողմից մի գուռը, նոյն աեղ մի լուսամուտ ևս, ձախ կողմից մի գուռը, որ միւս սենեակն է տանում: Վարագոյքը բացակայում պէս հանուը կոշկիներ է սրբում, հերտուղան փոքր լապարը վառում է և դնում է հանի առաջնին, յետյ նստում է կոշկի է կարում:

### ՏԵՍԻԼԱ

ՀԱՆՍ և ՀԵՐՏՐՈՒԴՅԱ:

ՀԱՆՍ: Յաւ ու կըսկեն այս մուլժ գիշերները: Ժամի հինգը գալիս է—թէ չէ—հարկաւոր է ճրագ վառել... Ախ, մայթիկ, ինչպէս երևում է այսօր Մարգարտին մենք չը պէտք է տեսնենք...

ՀԵՐՏՐՈՒԴՅԱ: Հա, դեռ էգուց էլ չենք կարող տեսնել: —Եթեկոյեան ալինցը եկել է... Պալատը հիւրերով միքն է... իսկ խեղճ Մարգարիտը միայնակ է. նորա հայրը հիւանդ է և ծեր... հենց միայն նա, իմ աշքի լոյն է ամեն բան սարգի ու կարգի դնում և կառավարում:

ՀԱՆՍ: Զարմանալի աղջիկ է և շատ լաւ էլ կըրթուած է:

ՀԵՐՏՐՈՒԴՅԱ: Մինչև անգամ իւրեան կարողութիւնից աւելի... գաղղիներէն էլ է խօսում...

ՀԱՆՍ: Նա եղիու տարի մարտաքաղաքումը, պա-

լատի մէջ, կոմսուհու մօտ ծառայութիւն է արել և հենց  
միայն իմ և իւր հիւանդ հօր համար է եկել մեր եր-  
կերը: Նորա հայրը բաժինքի փոխանակ իւր պաշտօնն է  
ինձ տալիս: Իրաւ է, ինչ փառաւոր բերդի վերակա-  
ցու կը լինեմ. . . Վեց հարիւր մանէթ ռոճիկ, թագա-  
ւորական սենեակ, փայտ և պատրաստ ձրագ. . .

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: ՀՇ, կարելի է, որ պալատականը  
մէ խեղճ կօշկակարի աղջիկ տամ:

ՀԱՆՍ: Ինչի՞ չ. . .

Պալատական մարդկերանցից  
կան, որ արժեն այդ մեծ պատուին,  
Մի քանիսն ևս մաշած կօշկով  
Օգտաւէտ են մեր արհեստին:  
Պալատի մէջ կան իմաստունք,  
Եւ կան նոյնպէս դերասաններ,  
Այն տեղ խռով ողջ մեծատուն չեն,  
կան և զատարի կօշկամաշներ:  
Ես չը խմող մի տղայեմ,  
Արհեստովս էլ սաստիկ ճարտար,  
Բայց կան աղէք, երբ խմում են  
Դաւունում են իսկ մէ կօշկակար:

Ես լինչ բանով եմ վատ այն գաստառանատուն  
գնացող եկող անիծած մարդիցը, որ Մարգարիտին ին-  
ձանից լսում է:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Նա համ հարուստ է, համ խելօք,  
մէկ էլ այն, որ նորա հօր հին բարեկամն է: Ասում են  
թէ, նա պսակվելու համաձայնութիւն է ստացել:

ՀԱՆՍ: Նա Մարգարիտիցը համաձայնութիւն չի  
լինել ստացած, այդ ես հաստատ գիտեմ:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Բայց գիտեմ, թէ նա քեզ վերայ  
ինչպէս է չարացած: Փողի համար երեկոյեանը էլի ե-  
կաւ, շատ ձղջաց, պօլեցով, ասում է, կ'առնեմ, ու-  
գում էր Պընցին գանգատ անել:

ՀԱՆՍ: Տեսնում ես այն գրողը տարածին, այն

դատաստանատան միանը. . . Ախար զօռով չը տուեց  
նա ինձ տասնուհինդ թումանը:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Լաւ, ասենք թէ զօռով տուեց, որւ  
ինչի՞ առար:

ՀԱՆՍ: Ա՛խ, մայրիկ: Ամօթ չեմ քաշում, որ այդ-  
պէս ես խօսում: Դու անցեալ ձմեռոք հիւանդ էիր, աշ-  
խատանքը քիչ, հարկաւորութիւնը շատ, — հայ փախտ  
առ, հայ դեղուուղ—դեղ ծախողը անխող չէր տալիս,  
ինչ պէտք է անէի: Գնացի այդ անպիտանի մօտ, մո-  
ռացայ, որ նա Մարգարիտին սիրում է. նա էլ երեսը  
ծռմռելով ասում է. համեցէք, Հանս, համեցէք, ես քեզ  
փող կը տամ, միայն մէկ պայմանով. ինձ խոստացիք  
Մարգարիտի հօր մօտ չը գնալ պալատի մէջ—և ահա  
քեզ դորա համար լիսուն թուման:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Դուն էլ խոստացամբ:

ՀԱՆՍ: Յայտնի բան է, շերումս գրոշ չը կար և  
դուք դժուար հիւանդ էիք:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Եւ յայտնի բան է, խօսքիդ վերայ  
հաստատ մնացիր:

ՀԱՆՍ: Յիբաւիք, ես իմ խօսքիս վերայ հաստատ  
մնացի. խոստացայ սպատար չը մտնել—և չեմ էլ մըս-  
նում: — Բայց այդ վնաս չունի, դորա փոխանակ Մար-  
գարիտը այդ ժամանակից դէսը ինքն է մեղ մօտ գալիս:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Զէ, բաններս բուրդ է. . . նա քեզ  
բերդը դնել կը տայ և այն ժամանակը—էլ ինչ գլխա-  
մեռ, աղջիկ այդպիսի թշուառ մարդու վերայ կը պա-  
կուի. . . բայց եթէ նա Պընցին խնդերք կըտայ—նալլաթ  
չար սատանին, այս ինչ ցաւ ու կրակի մէջ ընկանք  
մենք: Ես էլ չեմ ապրիւ:

ՀԱՆՍ: Դէ, այդպէս մի ասել է, հէր օրհնած, ես  
դորանից չեմ. վախենում: Ասում են թէ, մեր Պընցը  
շատ բարի մարդ է. այժմ էլ եկել է մեր փոքրիկ քա-  
զաքը իւր նշանածին տեսնելու համար և կամենում է  
պսակուիլ. այժմ ես էլ ոչ մի բանից չեմ վախենում:

ՀԵՐՏԾՈՒԻԴԱՅ: Ի՞նչ դուս եկաւ, ի՞նչ օգուտ մեզ  
գորանեց:

ՀԱՆՍ: Գիտե՞ք, մայթիկ, ես զանազան գրքերում  
և լրագրներում կարդացել եմ, որ այդ ժամանակ այդ-  
պիսի մեծ մարդեկը հւրեանց հպատակների վերայ ողոր-  
մում են, հարկ չեն առնում, խեղճերին բանտից հա-  
նում են...

ՀԵՐՏԾՈՒԻԴԱՅ: Ա՛ն... այդ ինչ լաւ բան է: Արի  
դու ինձ լսե՞ր, Պրնցի ոտները ընկիր և նորան պատ-  
միր քո վիճակը, յիսուն թումանը նորա համար ի՞նչ  
բան է... .

ՀԱՆՍ: Ո՛չ, մայթիկ, ես չեմ կարող ողորմութիւն  
խնդրել, ես դեռ ջահել եմ, առողջ եմ, կարող եմ շար-  
շարպիլ, աշխատել... Ո՛չ, ինձ համար այդ բանը ա-  
մօթ է: Թող այդ ծեր քօփակը գանգատ անէ ինձ վե-  
րայ, այն ժամանակ ես, շատ կարելի է, դորանով շահ-  
վեմ. բոլորը նորին պայծառափայլութեանը կը պատ-  
միմ. թէ Մարգարտին ի՞նչպէս եմ սիրում, թէ նա ինձ  
ի՞նչպէս է սիրում, թէ դու ի՞նչպէս ես մեզ սիրում, թէ  
այն դատաստանատան մուկը ի՞նչպէս է փող սիրում...  
տեսնենք, տեսնենք... Ա՛ն, Տէր Աստուած, ես մոռա-  
ցայ, որ պատօթի մօտ կօշիկ տանելու ժամանակ է,  
յետոյ սրճարան մտնեմ գարեջուր խմելու: Մայթիկ, մի  
լոյս անես:

ՀԵՐՏԾՈՒԻԴԱՅ: (Ճրակը լուսելով): Համեցի՞ք, ի՞մ աչքի  
լոյս, համեցի՞ք: Հարկաւոր է քեզ փոքր ինչ զրօնուլ,  
փոքր ինչ ազատ օդումը մանգալ: (Կողմանի ունետին են  
բոլոր գույշ):

## ՏԵՍԻԼԻԲ.

ՊՐԻՆՑ և ՖՕՆ-ԼԱՌԻԲԵ (բռնոն էն ձդնուած):

ՊՐԻՆՑ: Այս կօշկակարի գործատուն է: (Այս իրան  
այն իրշն է նայուած): Տեսքով մի հասարակ բնակարան է:

Ֆ. ԼԱՌԻԲԵ: Դուռը կընկի վերայ բաց է... գոր-  
ծատանը ոչ ոք չկայ... այս ի՞նչ անզգոյշութիւն է:  
ՊՐԻՆՑ: Երևում է որ այս տեղ գողանալու բան  
ը կայ:

Ֆ. ԼԱՌԻԲԵ: Բայց դուք ի՞նչ կ'ասէք, Զերդ պայ-  
ծառափայլութիւն, եթէ որ այս տեղ մեզ վրահասնեն:  
ՊՐԻՆՑ: Կ'ասենք թէ մի զոյգ կօշիկ ենք ուզում  
կարել տալ:

Ֆ. ԼԱՌԻԲԵ: Այսուածենայնիւ, համարձակվում եմ  
ասել, Զերդ պայծառած...

ՊՐԻՆՑ: Դէհ, բաւական է... ես տեսնում եմ ձեզ  
հաձելի չէ, որ ես, ինչպէս Հարուն—ալ-Շալիտը, ուրիշ  
շորեր հաքած, ծածուկ ման եմ գալիս իմ տէրութեան  
մէջը:

Ֆ. ԼԱՌԻԲԵ: Ո՛չ... ես միայն վախենում եմ, որ  
ք մինե թէ մէկ կովիտ մարդու պատահենք...

ՊՐԻՆՑ: Ի՞նչ դատարկ բաներ ես ասում. ամենքի  
հետ քաղցր և քաղաքալարի վարուեցի՞ք—ձեզ հետ էլ  
այնպէս կը վարուեն: Ես ուրախ եմ, մի կերպով ժամա-  
նակս անց եմ կացնում: Այս փոխարժութիւնը կեանքիս  
մէջը ինձ ուրախացնում է և գրաւում: Ճշմարիտն ա-  
սած, պալատական շատախօսութիւնիցը և խորաման-  
կութիւնիցը բոլորովին զգուել եմ. «Զերդ պայծառա-  
փայլութիւն, բարեհաճեցի՞ք... ամենապայծառափայլ  
պալինց, ի՞նչպէս էք բարեհաճում հրամայել... Զերդ  
պայծառափայլութեան կամեցողութիւնն է—մեր ամե-  
նասուրբ պարտականութիւնն է...»: Ճշմարիտ է թէ  
ոչ, որ շատ զգուել է:— Բայց գիտե՞ս, մեր պալատա-  
կանների մի բանը ինձ դուք չէ գալիս, այն է գաղղիե-  
րէն շատախօսութեան կիրքը, այդ արհամարհանքը  
գէպի մայթենի լեզուն: Ասածս ձեզ վերաբերեալ չէ,  
սիրելիս, այլ առհասարակ մեր ազնուականներին:

Ֆ. ԼԱՌԻԲԵ: Թէկ դուք խստութիւնով էք դա-  
տում պալատականներին, Զերդ պայծառափայլութիւն,

սակայն ձեր խօսքերի մէջ, պէտք է ասած, որ Ճշմար-  
տութիւն կայ:

ՊՐԻՆՅ: Ճշմարիս է՛ թէ ոչ: Միայն այս էլ պէտք է  
ասած, որ մենք երեսուն և վեց ժամ ժամանակից ա-  
ռաջ ենք այս տեղ եկել. . . Նշանածն կարելի է էգուց  
ընթրիքի ժամանակը այս տեղ լինի, բայց մընչև նորա  
գալը այս սակաւամարդ տեղը թնդէս պէտք է անց-  
կացնենք 36 ժամը: Թատրոն չը կայ, հացիերոյթ չեն  
տալիս. . .

Ֆ. ԼԱՌՈՒԲԻ: Ճշմարիս է՛, ձերդ պայծառափայլու-  
թիւն, շատ քիչ զուարձութիւն կայ այս տեղ:

ՊՐԻՆՅ: Գլխաւոր բանն էլ դա է, որ մեզ հար-  
կաւոր է մի զուարձութիւն կամ թէ մի կատակ հնա-  
րել, որ ողջ գիշերը ուրախ անցկացնենք: Այսուամե-  
նայնիւ, շնորհակալ եմ իմ շորես փոխած լինելուցը.  
կազմ միջոցում ես այնքան շարագործութիւններ տե-  
սայ, որ մտադիր եմ հենց էգուց վերջ դնել ամենին:  
Բայց ահա, արդէն գալիս են. . .

## ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՑՆՔ, ՀԵՐՏՐՈՒԴԱՅՑ և ՀԱՆՍ:

ՀԵՐՏՐՈՒԴԱՅՑ: (Հանուն): Անձանօթ պարոններ. . .  
այս լինչ նշանակում. . .

ՊՐԻՆՅ: Բարի ողջոյն, մայրիկու. . . Սա ձեր որ-  
դին է:

ՀԱՆՍ: Այս, ես սորա որդին եմ:

ՊՐԻՆՅ: Այս փոքրիկ քաղաքումը չը լինի թէ  
տօնէ: Փողոցներումը շատ ժողովուրդ է անցուգարճ ա-  
նում. . .

ՀԱՆՍ: Այս, կարելի է ասել, որ մեր քաղաքումը  
այսօր տօնէ:

ՀԵՐՏՐՈՒԴԱՅՑ: Մեր բարի պրինցը եկաւ իւր նշա-

նածին տեսնելու, որը որ այսօր առաւօտեան պէտք է  
մեր քաղաքուլը անց կենար, բայց դժբախտաբար, ե-  
մեկ թէ մի բան է պատահել, որ չանցկացաւ:

ՊՐԻՆՅ: Եթէ այդպէս է, ուրեմն էգուց կը գայ:

Ֆ. ԼԱՌՈՒԲԻ: (Հերուրդին): Միթէ պրինցը նշան-  
ված է:

ՀԵՐՏՐՈՒԴԱՅՑ: Դուք ազնուական պարոններից էք  
և ձեզ աւելի լաւ յատնի կը լինի, քան թէ ինձ. . . ես  
կարծում եմ, որ դուք պրինցի մօտիկ մարդկերանցիցն  
պէտք է լինէք:

ՊՐԻՆՅ: Համարեան թէ. . . ես մինչև անգամ նորա  
սպալատի մէջն եմ բնակվում:

ՀԱՆՍ: (Որը գեղակն առելով): Խնդրեմ ինձ ասել, այս  
լինչ բաղդատութիւն է, որ ես ձեզ այս տեղ եմ տես-  
նում:

ՊՐԻՆՅ: Այս բարեկամս կամենում է կօշիկ ձեւ  
տալ:

ՀԱՆՍ: Օ, այդ մասին անհոգ կացէք: Թողէք  
շափոր վերցնենք:

Ֆ. ԼԱՌՈՒԲԻ: Հարկաւոր չէ, ես իմ կօշիկը կ'ու-  
ղարկեմ շափոր համար:

ՀԱՆՍ: (Որոշը գեղակն առելով): Խնչակս կամենաք,  
ձերդ գերազանցութիւն:

Ֆ. ԼԱՌՈՒԲԻ: Ո՛չ, այդ աւելորդ է. . .

ՀԱՆՍ: Ո՛չ, արդէն ներեցիք, ձերդ գերազանցու-  
թիւն, ես մի ամենախոնաբարհաբար խնդիրք ունեմ ձեզ  
մօտ. . . Որովհետեւ դուք պրինցի մօտիկ մարդկերան-  
ցիցն էք, այդ պատճառով, յատնի բանի, դուք ինձ լաւ  
խորհուրդ կը տաք:

Ֆ. ԼԱՌՈՒԲԻ: Այդ լինչ խնդիրք է:

ՀԱՆՍ: Այսինքն, ես կ'ուզէի պրինցի հետ խօսել:

Ֆ. ԼԱՌՈՒԲԻ: Պընցի հետ. . . մու քեզ տրաքոց:

ՀԵՐՏՐՈՒԴԱՅՑ: (Հանուն յանոց տուած է): Ա՛յ, այ. . . այդ  
ինչեր ե՞ս դուս տալի. . .

ՀԱՆՍ: (Նորան կամաց սռում է): Ոչինչ: — Ասքա թէ պալատականներ են, բայց երեսում է, թէ հպարտ մարդիկ չեն: Ահա թէ ինչ է եմ խնդիրս . . .

ՀԵՐՏԲՈՒԴԱՅ: (Խօսուր իրեւով): Զեզանից ինչ թագանե՞մ, պատուելի պարոններ, եմ որդիս սիրահարված է մէկ աղջկայ վերայ, բայց նորա հայըը չի կամենում իւր աղջիկը տուրան տալ, այդ պատճառով այս լիմարը ուզում է պընցին խնդրել և աղաւում է, որ դուք նորա համար միջնորդէք. դուք ինչ խորհուրդ կը տաք:

ՊՐԻՆՑ: Ինչքան որ ինձ յայտնի է, արինցը ընտանեկան գործերում չի խառնվում:

ՀԱՆՍ: Բայց ես կարծում եմ, որ երբեմն պատահում է. . .

ՊՐԻՆՑ: Բացի սորանից, կարելի է այդ աղջկայ հայըը քո վարքիցը անբաւական է:

ՀԱՆՍ: Ինձ պէս կտրիմ տղայիցն աւելի էլ թնչ է ուզում:

ՊՐԻՆՑ: Բայց այդ աղջիկը հիշ է:

ՀԱՆՍ: Զեզ նման պալատականներից մէկի աղջկն է:

ՊՐԻՆՑ: Լաւն է:

ՀԱՆՍ: Լաւ կը մինի, միամիտ կացէք. . . Թու, կարծում էի թէ, ոտնամանի վերայ եմ խօսում. գարմանալի աղջիկի է, գաղղիերէն էլ է խօսում, դուք գիտէք, որ այդ պալատումը մօդայ է:

ՊՐԻՆՑ: Ինչի՞ նորա հայըը չի համաձայնվում:

ՀԱՆՍ: Որովհետեւ ես կօշկակար եմ:

Թէպէտ ես ինքս կօշկակար եմ,

Բայց այս քանս շատ լաւ գիտենք,

Որ աշխարհումս ամեննեքեան

Այնպէս մարդ են, ինչպէս ես եմ:

Մի բան էլ մենք ես արժենք,

Մեր ցեղն էլ է շարունակվում.

Մինը հարուստ, Ճոխ է ապրում,

Միւսն արհեստով կառավարվում:

Եւ այդ ինչպիս զրկողութիւն է, որ աշխարհումս ամեն բան վատ սովորութիւն է դարձած: Հարուստը պատկվում է հարուստի վերայ, աղքատը — աղքատի: Միթէ այս բանումը մէ արդարութիւն կայ: Դորանով միայն նեղում, Ճնշում և հարստահարում են խեղճ մարդկանց: Եթէ ես պընց լինէի, ես այսպիսի մի օրէնք կը հրատարակէի, որ հարուստը պատկվէր աղքատի վերայ, իսկ աղքատը — հարուստի: Խոկ ով որ այս հրաժանս չէր կատարել, կը հրամայէի նորան մահով դատապարտիլ:

ՊՐԻՆՑ: (Կամաց դէռի Լառնէն): Տեսնում եմ այս մեռածին: (Հառնէն): Դու Ճշմարիտ ես, մեղաւորը վերակացուն է:

ՀԱՆՍ: Միթէ ես մեղաւոր եմ, որ կօշկակար եմ ծնուել. . . հա, քանի որ գեռ չէի ծնուել, եթէ հարցնէին. Ճանս, ինչ ես ուզում լինել, այն ժամանակը յայտնի բան է, որ ես չէի ասել (Յանիկոն յայնով) կօշկակար. . .

ՊՐԻՆՑ: Բայց եթէ քեզ հարցնէին թէ, դու ինչ ես ուզում լինել:

ՀԱՆՍ: Ի՞նչ. . . Հըմ. . . այն ժամանակ ես գիտէի ինչ — կուգէի լինել հարուստ և գիտնական պարոն, աղնուական, մեծատուն, բարոն, կոմս. . . հա, պընցութեան էլ չէ չէ ասել:

Ֆ. ԼԱՌԻՆԻՔ: Յայտնի բան է:

ՀԱՆՍ: Բայց եթէ բանը այն տեղը ընկնէր, — Ճարահատած հենց մեր պընց ճերմանը կուգէի լինել:

ՊՐԻՆՑ: Օհօ, տես հոր է թուցում մեր տղան է:

ՀԱՆՍ: Բաս ոնց գիտես, թէ մարդ ցանկանում է, թող այսպէս ցանկանալ:

ՀԵՐՏԲՈՒԴԱՅ: Ա ի, դու լիմար. . . լինէր ես դուրս տալիս:

ՊՐԻՆՑ: Եւ դու կարծում ես, որ եթէ դու պընց լինէի, երջանիկ կը մինէմը:

ՀԱՆՍ (Յաները պրոբլեմ): Այս, բաներս էլ կարգի կը դնէի:

ՊՐԻՆՑ: Բայց դու պըինց ձերմանին չես ճանաշում:

ՀԱՆՍ: Ես նորան չեմ ճանաչում, չը որ նա հենց երէկ գիշեր եկաւ, բայց ամենքը առհասարակ նորան սիրում են և գովում, ասում են. մի բարի, զուարձասէր, ուրախասիրտ տղայ է. . . բայց ամենից գլխաւորն այս է, որ պըինց է և հարուստ:

Ֆ. ԼԱՌԻՆԻ: Բայց ես կարծում եմ, որ դու այն պատճառով ես ուզում պըինց դառնալ, որ լաւ ուտես և լաւ խծես:

ՀԱՆՍ: Հա, թնչ թաքցնեմ, մարդս մեղանչական է, սիրում եմ լաւ ուտել և լաւ խմել.—բայց բացի սորանից, եթէ ես պըինց լինէի, մեջտ վերահսու կը լինէի, որ ուրիշներն էլ ուտելու բան ունենալին:

ՊՐԻՆՑ: Այս դու լաւ բարի մարդ ես եղել այ. . . ափսոս, որ դու պըինց չես:

ՀԱՆՍ: Շատ ափսոս: Բայց պէտք է խոստովանուած, որ այդ շատ անգամ եմ ես երազում տեսնում:

ՊՐԻՆՑ: Իրաւ ես ասում:

ՀԵՐՏՈՒԻԴԱՅ: Եւ գիտես ինչպէս. շատ անգամ սա ինձ վերայ ահ է գցում, երբ առաւօտները պատճում է, թէ երան երազում տեսել է մի երեկի պարոն դարձած. . . բայց ինչ անես, այդ բոլորը այն անիջուած գրքերն են անում. . .

ՊՐԻՆՑ: Այնու ամենայնիւ, երազները երբեմն կատարվում են, և գիտէ, կարելի է մի անգամ պըինց դառնաս. . .

ՀԱՆՍ: Ե՞ն, դա բոլորովին լինելու բան չէ:—Հին ժամանակները կարելի է պատահէր, խօսք չունեմ, բայց այժմ չկարծեմ:

ՊՐԻՆՑ: Ի՞նչպէս թէ հին ժամանակները:

ՀԱՆՍ: Այ, թէ լինչպէս: Սորանից մի հազար կամ

երկու հազար տարի առաջ. . . և այն էլ այն ժամանակները, երբ կախարդ մարդիկ ու կանայք կախին. . . Պարսկաստանում, կարծեմ. . . հա, Պարսկաստանումը շատ է պատահէր, միտքը է գալիս, մարթիկ. . . Ահա, այս մօտիկ օրերումս էր, որ մենք լրագրում կարդացինք, թէ մի խեղճ, բայց ամենաբարի մարդ, այսինքն, մի կօշկակար, պըինց է գարձել, իսկ հազար պըինցը՝ կօշկակար. . . եղանակ, այն ժամանակը լաւ ժամանակի է եղել մեր արհեստաւորի համար. . . Այժմ յազմնի բան է, այդպէս բան չի պատահէր:

ՊՐԻՆՑ: Ի՞նչ գիտես: Եթէ այդ մի անգամ պատահէր է, կապող է միւս անգամ էլ պատահէր:

ՀԱՆՍ: Բայց դուք թնչ էք. կարծում:—Այ թէ ծիծաղ կը լինէր հա, որ ես առաւօտեան պըինց ձերման դարձած, տեղիսա վեր կենամ, հա, հա, հա. . . :

ՊՐԻՆՑ: Իսկ պըինցն էլ քո անկողնում կօշկակար դառնաս: Հա, հա, հա, : . Այ ծիծաղ կը լինէր հա. . . (ամենու ծիծաղում էն):

ՀԱՆՍ: (Ծանր ու Էտրու): Բայց գիտէք ինչ կայ. վնաս չէր լինել, եթէ մի երկու ամիս կօշկակար դառնաս: Գոնեայ այն էլ է կ'իմանար, թէ թնչ կը նշանակէ խեղճ մարդ լինելը: Բայց կատակը մի կողմ մնայ, պատուելի պարոններ, թողէք ձեզանից հեռանամ. . . դուք, յայտնի բան է, ուսում առած մարդիկ էք և գիտէք, որ երեկոյեան ժամանակը ծարաւութիւնը կօշկակարներին խիստ է նեղում. . .

ՊՐԻՆՑ: Ո՞ւր ես կամենում գնալ:

ՀԱՆՍ: Ո՞ւր. . . պէտք է գնամ այս մեծ ճանապարհի վերայի սրճարանը:

ՊՐԻՆՑ (յաց դաշտ ու ուղիղ լաւագիր): Ահա քեզ ընկեր, սորան ևս հետդ տար:

ՀԱՆՍ: Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ:—Մայթիկ, բան է, եթէ Մարգարիտը այս տեղ գայ, նորան ասան, որ այսօր հոգիս դուրս եկաւ նորան սպասելով. . . Բայց

սորանից աւելի չեմ կարող սպասել. այժմ ծարաւութիւնից է հոգիս դուրս գալիս և քիչ է մնում մեռնեմ. . . խնդրվ, որ էգուց գայ: (Գնում է գլուխութեաւ):  
(Այդ ժամանութեաւ որբիցը լուսեէի հետ խօսում է):

Ֆ. ԼԱՌԻԲԻ: (իտակ որդիշն): Ի՞նչպէս, միթէ ձերդ պայծառափայլութիւնը կամենում էք. . .

ՊՐԻՆՅ: (այս շաբաթ): Անպատճառ. . . սուս, ձայնգ. . .

ՀԱՆՍ: (գլուխութեաւ): Ուրեմն գնանք, պարոնայք:

ՊՐԻՆՅ: Ահա, դու այս պարոնի հետ կը գնաս: (Հանին իտակ ասում է): Դա կարող է մի հնարքով պընցի հետ խօսել: (Դուրս գնում): Մնաք բարով, մայրիկ:

ՀԱՆՍ: (գլուխութեաւ): Ձերդ գերազանցութիւնն, ներեցիք մեր տան պակասութեանը. . .

Ֆ. ԼԱՌԻԲԻ: Գնանք, գնանք շուտով, ցտեսութիւն, մայրիկ:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Գնաք բարով, պարոն:

ՀԱՆՍ: Մնաս բարով, մայրիկ: (Ֆ. Լառտէի հետ դուրս):

## ՏԵՍԻԼԻ Դ.

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ (Տէսում): Ա՛ն, շատ կ'ուզէի իմանալ. թէ այս պարոննեւը ովքեր էին. . . նոցա շորերից երեսում էր, որ պընցի հասարակ ծառաներից չէին. . . ոչ, մանաւանդ նոցանից մէկը, նա այնպիսի ազնիւ ու քաջցը դէմք ունէր. . . իսկոյն երեսում էր, որ նա ծառայ չենուել. . .

## ՏԵՍԻԼ Ե.

### ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ և ՄԱՐԳԱՐԻՏ:

ՄԱՐԳԱՐԻՏ (Պատահ կապէլով, համբուրում է նորան): Բարով քեզ, Հերտրուդայ մայրիկ:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Օ՛հ, հոգեանկ Մարգարիտ, մենք էւ յոյս չունէնք, որ քեզ այսօր կը տեսնենք:

ՄԱՐԳԱՐԻՏ: Սորանից վաղ չէի կարող գալ, մայրիկ, այնքան զբաղմունք ունեմ, որ չեմ կարող ասել. . . բայց մւը է Հանսը:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Նա տանը չէ:

ՄԱՐԳԱՐԻՏ: Ա՛խ, թնչ անպիտան ոքմին է: Համբերիթը, ես նորան ցոյց կը տամ:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Մեզ մօտ երկու պարոններ կային, կարծեմ պընցի մօտիկ մարդկերանցիցն էին. Նա նոցանից մէկի հետ դուրս գնաց:

ՄԱՐԳԱՐԻՏ: Պընցի մօտիկ մարդկերանցից . . . տեսնես այդ ով պէտք է լինի. . . Լէյր—քժիշկը, ատենապէտը, սենեկապէտը. . . ես նոցա հենց այս ըոպէիս տեսայ պարատումը, ծառանըը, բայց ոչ, նոցա հանաշել հեշտ է. . . հագուստից շուտ կարելի է ճանաչել. . . Բայց այժմ բանը նորա մէջն է, թէ ընչել համար էին նորա այս տեղ եկել:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Նոցանից մէկը իրան համար կօշիկներ ձեւել տուեց:

ՄԱՐԳԱՐԻՏ: Ա՛յ քեզ նոր բան: Միթէ նա մայրաքարաքիցը բորիկ էր եկել: Շատ ժամանակ է, որ նորա այս տեղ էին:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Նոր, այս ըոպէին դուրս գնացին. . . միթէ չը տեսամք, չը պատահէցի՞ք. . .

ՄԱՐԳԱՐԻՏ: Զէ, ես ցանկերի մէջովն եկայ, որ այն անիծուած դատաստանական միանը չը հանդիպեմ, որը միշտ իմ լետեկից ման է գալիս:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Ինչի՞ ես փախչում նորանից, որդի, նա քո փեսացուն է:

ՄԱՐԳԱՐԻՏ: Ոչ, ներեցի՞ք. . . Հողեմ նորա գլուխը. Ես այդ գգուելի ծեր—քօփակին այնպէս եմ ատում, որ տեսնելիս սիրոս հենց ասում է, մատերդ աչքը կօխիր:

ՀԵՐՏՐՈՒԴԻԱՅ: Այդ գեռ ոչինչ, դա Աստուծոյ ողոր-

մութիւն է . . . գոնեայ քաղցը խօսքեր է ասում քեզ, իսկ մեզ բերդովն է սպառնում . . . Ա՛ն, երանի թէ Աստուած մէկ 50 թուման փող հասցնէր մեզ . . .

**ՄԱՐԳԱՐԻՏ** (փող պալով): Ա՛յ քեզ փող:

**ՀԵՐՏԾՈՒԻԴԱՅ**: Այդ լնչ է, սիրելի Մարգարիտ: Այդ փողերը նր տեղից ես ճարել:

**ՄԱՐԳԱՐԻՏ**: Մի վախիր, հաւատու ինձ, որ չեմ գողացել . . . վեր առ, ինդրեմ:

**ՀԵՐՏԾՈՒԻԴԱՅ**: Ո՛չ, աղջիկս, ես այդ փողերը չեմ կարող վեր առնել, — Հանսս կը վիրաւորվի:

**ՄԱՐԳԱՐԻՏ**: Թող Հանսը շիմանայ, իսկ դու վեր առ, սիրելի մայրիկս:

**ՀԵՐՏԾՈՒԻԴԱՅ**: Բայց դու այդ փողերը նր տեղից ես վեր առել:

**ՄԱՐԳԱՐԻՏ**: Ես արդէն գիտէի, որ այդ չար մարդը ձեզ շարչարում է իմ պատճառաւ . . . բայց յայտնի է, որ եթէ ես մի խօսք թուցնէի բերանիցու — նա իսկոյն ձեզ հանդարս կը թողնէր, բայց ես ոչ մի բանով չեմ ուզում նորան պարտաւոր մնալ: Ես գիտեմ, թէ ինչ կ'անեմ . . . Դու համբերիք: Իմ ողորմած հոգի մօրից ինձ երեք շարք մարգարիտ մնաց, ես միայն չորս անգամ եմ վերաս կրել: Դա Հանսին դուք չեկաւ, երբ տեսաւ վերաս մարգարիտ — ուստի ես էլ ուշարկեցի ու գրաւ դնել տուի և այդ փողերը ստացայ: Միևնույն չէ մարգարիտը թէ լոմբարդում լնի դրած, թէ իմ սընդուկումը: (Գիւռելով) Վեր առ, մայրիկ, եթէ դուք չկեր առնէք, այս փողերը ես նր տեղ պէտք է պահեմ . . .

**ՀԵՐՏԾՈՒԻԴԱՅ**: Ա՛չ, ես քո խօսքը չեմ կարող կոտրել, իմ հսեղտուակ. . . (լոյ շնէրվ) Աստուած կը վարձատրէ քեզ քո բարի սրտի համար . . . Ո՛չ, բեռն այժմ լինակս թեթեացաւ է: Թող այն անիծուած դատաստանատուանը գնացող եկող մարդը գայ — սորանք նորա աչքը կոխեմ. . .

**ՄԱՐԳԱՐԻՏ**: Միայն չը մոռանաս Հանսի ձեռացագերը նորանից առնել: Բանք վերջացած է, — էլ դորա համար խօսել հարկաւոր չէ: Ես ձեզ շատ բան պէտք է պատմէի, բայց ժամանակ չը կայ: Մնաք բարով: Ժամանակ է, ժամանակ է:

**ՀԵՐՏԾՈՒԻԴԱՅ**: Համբերիթ, համբերիթ, փոքր ինչ հանգստացիթ, նոր եկար — և այդպէս շուտով փախչում եմ:

**ՄԱՐԳԱՐԻՏ**: Աստուած վկայ, մինչև որկորս շարչարանքի մէջ թաղուած եմ: Իսկ էգուցուայ շարչարանքս աւելի կը լինի և մտածելն անգամ զարհուրելի է. պառաւ Եշսանուշին, նորա աղջիկը, պալատական տիկինները, սենեկապետները, որսորդ զինուորները, ծառաները, արար ծառաները, մի կառք լիքը պայլատականներ, կատուներ, շներ, էշեր, զորիներ և այլն և այլն բաներ. սոքա բոլորը գիշերը այս տեղ պէտք է մնան և գիշեր են: Այսուամենայնիւ — ժամանակ է, ժամանակ է: (Կանոնաց է գնալ):

**ՀԵՐՏԾՈՒԻԴԱՅ**: Համբերիթ, ես լաւ չսեցի. . . այդ լնչ կատուներ ու շներ ասեցիր. . . թէ ես ծուռը լսեցի:

**ՄԱՐԳԱՐԻՏ**: Ո՛չ, այսինքն պալատական կատուները: Տեսէք, թէ լնչ կայ, մայրիկ: պալատական տիկինը իրան ծառալութիւն անելու համար ունի մի պատրուար աղջիկ, մի պատուաւոր տղայ, էլի մի աղջիկ, այս աղջիկն էլ մի աղախին ունի, իսկ այս աղախինը էլի մի փոքր աղախին, որը սաստիկ թեթեամիտ և հպարտ ոքմին է, և որը ոչ ոքից ու ոչնչով բաւական չէ, և երան այնպէս է կարծում թէ պալատի անանիկինն է, մանաւանդ եթէ փոքր ինչ էլ գեղեցիկ է, և տանջանք է, ասում եմ, քարը չէ դիմանալ: Ես ենքս հենց այդ կապու կոմսուհու մօտ էլ և նորա ամեն բաները գիտեմ: **ՀԵՐՏԾՈՒԻԴԱՅ**: Ուրեմն քեզ էլ էլն այս պէս կանչում: գիսօն, գիսօն:

**ՄԱՐԳԱՐԻՏ**: Ո՛չ, ոչ, ինձ կանչում էին աղջիկ պա-

ըոն Աղինայ: Բայց այդ բանը ձեզ յետոյ կ'ասեմ, իսկ այժմ մնաք բարով, ժամանակ է: (Կահենում է գնու):  
ՀԵՐՏՐՈՒԹՅՈՅ: Ինչ անես, չեմ թողուլ ոտո ոտիդ առաջը դնես, մինչև ինձ շատես, թէ դու այդ ինչ Աղինայն: . . . չը որ քեզ Մարդարիս են կոտում:

ՄԱՐԴԱՐԻՅ: Կոմսուհուն այդ անունը չը դուր եկաւ, ինձ նոր անուն դըեց Աղինայ: Ախար պալատականներն էլ իրանց սովորութիւնները և ծէսները ունեն: Ա՛յս, այն տեղ թնչ գուարդալի է: Եւ թնչքան թանկ արժէ պալատականների մօտ գեղեցիկ մնելը. . . ծածուկ տեղից նայում են, սիրահարական հնարքներ են գործ դնում, սկսում են ձեռքը գլխիդ քսել, եսեւցդ ման գալ, բարեխօսութիւններ անել. . . իսկ ուրախութիւններին, պարահանդէսներին էլ չափ չը կայ. . . սերուն կադրել են պար գալիս, տրայ, լայ. . . (Եթէ գումար է և որո՞ւ է գումար) թնչ հօրաշալի է է. իսկ վարում. . . տրայ, լայ, լայ: (Եթէ գումար է և որո՞ւ է գումար) Ի՞նչ գեղեցիկ է է. . . գէհ, այժմ արդէն ժամանակ է, մնաք բարով:

ՀԵՐՏՐՈՒԹՅՈՅ: (Կահենում է նորոն համբուրէլ): Գնաս բարով, գնաս բարով, իմ աղաւնեակ: (Կահենում է): Գեռ կաց, մէկ բան էլ հարցնեմ քեզ, չը որ մի տարի հազիւ մնացիր պալատում, այդ ձեւը դու Ե՞րբ սովորեցիր:

ՄԱՐԴԱՐԻՅ: Օ՛չ, այդ դատարի բան է: Մայրաքաղաքում աղջիկը մի շաբաթուայ մէջն է լուսաւորվում. . . Ես կարող էի այս օրուէիս ինչ գիտնական պարոնի որ ուզում էք ներկայացնել, բայց ափսոն, որ ժամանակ չունեմ: Մնաք բարով:

ՀԵՐՏՐՈՒԹՅՈՅ: Ուզիվ որ ժամանակ է, գնաք բարով:  
ՄԱՐԴԱՐԻՅ: (Գումար է և յերեք պատճեամ): Զէ, ոյ քեզ ծիծաղ, գիտե՞ս, թնչ է, մայրեկ, մէկ անգամ գեմակահանդէսում ինձ իշխանուհին կարծեցին. . . այդ անցքն էլ պատմ եմ քեզ և յետոյ վազելով տում կզնամ, վնաս չունի, չեմ ուշանալ:

ՀԵՐՏՐՈՒԹՅՈՅ: Պատմիր, հոգի ջան, պատմիր:

ՄԱՐԴԱՐԻՅ:

Մը հետ դիմակահանդիսում բարիկենդանքի ժամանակ, երբ կոմսուհու շորեր հաքայ, կարծէիր թէ ինքն եմ իստակ: Երբ դահլիճում ստք դըեցի, վազաքի ողջ առիւծները Շոյտ դիմացին ուրախ ինձ մօտ Որ ցոյց տան ինձ իրանց սէրը: Ահա, փողերը հնչեցըն, Սկսեցին շրջապարել, Մարդեկ կանանց, կանայք մարդոց Սկսեցին ողջագութել:

ՀԵՐՏՐՈՒԹՅՈՅ:

Իրաւն ասեմ, չեմ հասկանում թէ թնչ առիւծ, թնչ գազան, Դոքա առաջ կատու էին, Այժմ առիւծ փոխվեցան. . .

ՄԱՐԴԱՐԻՅ:

Ա՛յս, իմ մարթիկ, քեզ թնչ ասեմ, Որ միտքս քեզ բացատրեմ: Մեր քաղաքի մէջ առիւծներ Անուանվում են միշտ հարուստներ: Բայց նոքա թնչով են առիւծ, Այդ է ցած խարեբայութիւն, թէկ շատ կան դունչ պրոնկներ, Որոնց սագում է կապկութիւն: Եւ այս առիւծ ասածներս Վառ աչքերով ինձ են նայում, Այն ժամանակ ծանը ու բարակ Ես ֆրանսերէն եմ կոտրատում: (Անիսու երդով վասր շարունակում է. Մորդուիդ իւսում է):

Ah! vous ne savez pas, vous déguisez, je vous ai d'abord reconnue... իսկ ես բոլորովին կոմսուհու ձայնով պատասխանում եմ. (Սեղանի վրայի Հերթուրտայի ակնոցները վշտամատ է, առանձին նոյնամատ է, ինչու չեւ ուրածուած): Vous êtes un indiscret, comte Alfred, allons, taisez vous, ne me trahissez pas!!.. Etiez vous au spectacle hier? N'est ce pas, Rubini a chanté comme un ange?—Oh; quel transport! Avouez que nos chanteurs, allemands n'eu approchent pas!.. Բայց ահա, սկսուեցաւ պօլկան—

Ամենքն էլ լնձ են դեմում  
«Permettez, madame!» խօսքերով,  
Եւ լնձնեց մեր լսելով  
Հեռանում են կոտրատուելով:

### ՀԵՐՏԾՈՒԻԴԱՅ:

Գաղղիերէն այդ բառերից,  
Գիտես որ բան չեմ հասկանում,  
Ու «մերսին, մադամն, պերմետէն»  
Գիտեմ որ լիբր յիշոցներ են:

### ՄԱՐԳԱՐԻՏ:

Ա՛յս, պօլկայ, պօլկայ, ի՞մ հոգի,  
Քեզ կը պարեմ, ինչքան լինի,  
Իրաւն ասեմ շատ պարեցի,  
Որ համարենայ թէ թըմրեցի:  
Այն տեղ ես իմաստ ծարաւեցի,  
Բան ուզելը անյարմար էր  
Սեր լեզուով, և սկսեցի  
Գաղղիերէն այսպէս ասել.

(Օբիւրու շարունակամատ է անիսու երգով, Մարգարիտը խօսում է...) Հովհարով հովհամ փչում. . . (Հերթուրտի իտրոծ հօվիք)

Քրիստուս է և հովհ է վշտ) և շաբունակում եմ. il fait une chaleur un itouffante ici, vous seriez tres—aimable, messieurs, de me procurer un verre de limonade... .

### ՀԵՐՏԾՈՒԻԴԱՅ:

Պարզել անգամ չի հարկաւոր,  
Գիտեմ ինչ ես ուզում ասել,  
Ուրեմն գու նոցա հաշուով  
Մի բաժակ լիմոնադ ես խմել:

### ՄԱՐԳԱՐԻՏ:

Էլ լինչ մէկը, համարեա թէ  
Միտքս դըի նոցա պատժել,  
Ո՞չ գիտէ քանի թաս արշադ,  
Մարօժիներ ու լիմոնադ,  
Սոցա վերայ չորս օշարակ  
Բեզէ, կանֆէտ տեսակ, տեսակ,  
Լեկեօրներ, քաղցրեղէններ,  
— Բուֆէտումն ինչ կար (ո՞չ) սրբեցի,  
Մի խօսքով այնաչս մարսեցի,  
Որ առիւծն ուտէր, կը ճաքէր:

Բայց այս առիւծ կոչուածները,  
(Trois bis) comment vous portez-vous?... .

(Ծէծառէլ) Հա, Հա, Հա

Ինձ նայում են զարմանալով... .

Բայց ահա խաղում են կատիլիօն,

Կրկին դէպ ինձ կոտրտվելով... .

Ես կռամնում բարձրանում եմ

Ամենին տեղ նոցա տալով:

Մի կերպ ծլկել եմ աշխատում,

Հնարքով յետ յետ քաշուելով,

Յետոյ կոմսուհուն պատժեցի

Իսկոյն տան դռնից ներս մտնելով:

**ՀԵՐՏՈՒՄԸՑ:** Բաս դու երբէք չեմ խղճում,  
Բայց կոմսուհին լինչ ասաց:  
**ՄԱՐԳԱՐԻՑ:** Խելքից գնաց և նա էլ,  
Սկսեց ինձ նման ծիծաղել:  
(Թէծողում է: Մոռավիան Տինչ գործողութեան մէրջը շարունակում է):

### ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՅՆՔ և 1,081 ԵՆԸ:

**ԼՕՏԻԵՆ** (Պատահ կազմելով): Շուտով՝, շուտով տուն հասթր,  
**ՄԱՐԳԱՐԻՑ:** Ահա, արդէն ժամանակ է... Հօրս  
Հիւանդութիւնը հօ չէ սաստիացել:  
ԼՕՏԻԵՆ: Ո՛չ, բայց նա բարկանում է, որ այսօր  
ու այն օրը քեզ ման եկան և ոչ մի տեղ չը գտան. Պընցը  
քեզ կանչում է:

**ՄԱՐԳԱՐԻՑ:** Հենց պընցը թնքը... Տեսնես այս  
ինչ է նշանակում... (Շուտ շուտ խօսուալ) գէհ, մնաք բա-  
ռով, մայրիկ... Արդէն ժամանակ է, ժամանակ է պա-  
տառը գնալու... Հանսին ասացէք, որ ես հըսածայեցի  
նորան ողջոյն տալ... կամ թէ ո՛չ, ես չըսածայեցի  
նորան ողջոյն տալ: Ասացէք, որ նա վատ մարդ է, որ  
ես նորան չեմ սիրում, ինչո՞ւ ինձ չսպասեց... ասացէք,  
որ այդ պատճառով ես էգուց էլ չեմ գալ... կարելի է  
թէ ճաշիցն առաջ, այն ես մի բոլք ժամանակով...  
ո՞հ, այս ինչ մութն է.... Վազիթ, որ վազ տանք,  
Լօտիեն... (Հերթուառն առաջ է): Հա, մոռացայ, նորան  
ասացէք, որ ես նորա վերայ նայել անդամ չեմ կամե-  
նում, ես նորան չեմ ուզում ճանաչել, բարկացած եմ  
ես նորա վերայ և ցանկանում եմ, որ նա վատ երագ  
տեսնէ...: Մնաք բարով, մայրիկ, մնաք բարով:

(Վարդապէտ)

Վերջ առաջին բարուածի:

### ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Պընցի պալատի մէջը մի դաշլիճ: Տան լաւ կարասիք: Հանսը,  
մեծադին խալաթով, քնած է բաղմարանի վերայ, Երկու ծառով  
և երկու որսորդ զնուորներ նորա շուշը այս կողմն այն կողմն  
են նայում, այս կողմն, այն կողմն ընկնելով Ֆօն-Լաուբէն  
միւս կողմում կանգնած քնածի վերայ նայում է: Այս կողմը մէ  
մէծ հայելի է գըած շրեթ հաքնելու համար: Չափ կողմը եւը  
ամեն պարագաներով մի գըասեղան է գըած. Նորա յետե գըած է  
—մի դաշնամուր:

### ՏԵՍԻԼ Ա.

Ֆ. ԼԱՌԻԲԵ, ՀԱՆՍ (հաջ), ԵՐԿՈՒ ԾԱՌԱՆԵՐ  
և ԵՐԿՈՒ ՈՐՍՈՐԴ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ:

1-ին ԾԱՌԱՅՑ: Այժմ ամեն բան պատրաստ է. նո-  
րին պայծառափայլութիւնը կարող է տուն մտնել:

Ֆ. ԼԱՌԻԲԵ (բարբեր վնաւութիւն է): Ասմ շուտով...  
Զեռները լուացիք թէ ոչ:

2-ր ԾԱՌԱՅՑ: Որքան կարող էինք աշխատեցինք,  
բայց էլք փոքր ինչ մուր մնաց... էլ արդէն չէր կա-  
րելք պինդ մաքրել, որովհետեւ կը զարթնէր:

1-ին ԾԱՌԱՅՑ: Այդ պատճառով էլ շատ օդիկօլոն  
քսեցինք:

Ֆ. ԼԱՌԻԲԵ: Նորին պայծառափայլութիւնը ահա...

## Տ Ե Ս Ի Լ Բ.

ՆՈՅՆՔ, ՊՐԻՆՑԻ, ԲԺԻՇԿԻ, ԱՏԵՆԱՊԵՏԸ, և  
ՄԻՍԵՆԵԿԱՊԵՏԸ:

ՊՐԻՆՑ (Պատմ Հոնելով): Եւ այդպէս բոլորը պատ-  
րաստ է:

Ֆ. ԼԱՌԻԲԻ: Բոլորը, ինչպէս Զերդ պայծառափայ-  
լութեան կամքն էր:

ՊՐԻՆՑ: Շնորհակալ եմ (Հանով Քըրոյ Հոնելով): Շատ  
լաւ, շատ լաւ... Է՛տ, տղայք, սրճարանի մէջ դուք նորա  
հետ ինչպէս ժամանակ անցկացրեք:

1-ին ԾԱՌԱՅՈՒՅԹ: Սկզբեց, ձերդ պայծառափայլու-  
թիւն, ձեր պալատիցը նորին պայծառափայլութեան  
համար ուղարկած գինուն՝ նա շատ գույ չը տուեց... .

2-րդ ԾԱՌԱՅՈՒՅԹ: Բայց մենք երբ շամաննեայ գինին  
բաց արինք և սկսեցինք նորա ծանօթների ու նշանածի  
կենացը մէկ մէկ կոնճել, նա ուրախացաւ... դէհ, ար-  
դէն սկսեց բաժակ բաժակի յետեց դարտակել. . . Սց-  
ժամանակը արդէն դժուար չէր նորան և աւելի թունդ  
խմիչքներ առաջարկելը, այնպէս, որ կէս ժամից յետոյ  
նա աթոռեցը վայր գլորուեցաւ, ինչպէս դէզեց լսուի  
խուրձը և գուռնայ դիմիլը այն տեղ ձգուեցաւ:

1-ին ԾԱՌԱՅՈՒՅԹ: Մենք նորան վերցրինք բերինք պա-  
լատը և ահա դեռ մինչև այժմ չի զարթնել:

ՊՐԻՆՑ: Շատ լաւ, այս ինչ լաւ բան է: Նայեցէք,  
որ ընթրիքեց յետոյ նորան տանիք ննջարանը, շոբերը  
հանէք, և պարկեցնէք. . . (Եկան պարուր գենուանիւթը): Խոկ  
դուք աշխատեցէք, որ նա այժմեանից աւելի խոռը  
քնէ, յետոյ նորան առաջուայ շորերը հագցրէք, յայտնի  
բան է, և ինքներդ էլ ձեր շորերը փոխեցէք և միենոյն  
ձեռվ տարէք նորան իւր պառաւ մօտ մօտ և ասէք թէ  
շատ է կոնճել, հարբել է - ասացէք նաև, որ սրճարանի

տէրը նորան ձեզ հետ տուն ուղարկեց: (Բնով Ֆ. Լառ-  
բին): Ճշմարիտ թէ ոչ, որ այս բանը նորան բոլորովին  
կը շփոթէ. . .

Ֆ. ԼԱՌԻԲԻ: (Ծիծողէլով): Զարժանալի՛ հնարագիտու-  
թիւն է:

ՊՐԻՆՑ: Այժմ կատակերգութիւնը կարող է սկսուել  
— ձեր պաշտօնները պէտք է որ հաստատ լինեն: (Հանով  
Քըրոյ սահ պալով): Այս գիշեր ահա սա է ձեր պարինցը: Ես  
գրափ Ալտեգորին եմ, նորա առաջին արքունական  
սենեկալետը, խկ դուք, ամենքդ ձեր գիտենալով, ինչ-  
պէս որ կը կամենաք, նորա առաջին ծառայելու համար  
մէկ մէկ պաշտօն ընտրեցի՞ք: (Ծիծողէլով): Միայն խնդ-  
րեմ չը ծիծաղել... այդ կարող է ձեր բոլոր կատակե-  
րացնել: (Սկսելապէտին): Բարսեղ, սկսիր զարթեցնել նո-  
րան: (Ծիծողէլով և ուրուր գենուանիւթին): Դուք ամենքդ կա-  
րող էք այս տեղ մնալ — տեսարանը շատ գուարձալի կը  
լինի: Ահա, իմ սիրելի կառւբէ, մենք կատակերգու-  
թիւն չունէինք, բայց այս եղանակով մենք ինքներս  
հնարեցինք:

ՍԵՆԵԿԱՊԵՏԸ: (Բնով Հանով սեղ շրջէլով): Զերդ  
պայծառափայլութիւն, ձերդ պայծառափայլութիւն... .

ՊՐԻՆՑ: (Ծիծողէլով): Ո՞վ գիտէ դու ինձ ևս այդ-  
պէս ես զարթեցնում:

ՍԵՆԵԿԱՊԵՏԸ (Սորունակութիւն պարեւեցնել, պահցին պարունակուն է  
պալով): Թողէք, ձերդ պայծառափայլութիւն, ինչպէս  
կարելի է. . .

ՊՐԻՆՑ: Սուս. . . զարթնում է:  
ՀԱՆՍ (Սորունակութիւն գալով): Հը, թնձ է, մայրիկ,  
միթէ ժամանակ է. . .

ՍԵՆԵԿԱՊԵՏԸ: (Սորունակութիւն հրամակեցիք ձեզ զարթեցնել): Զերդ պայծա-  
ռափայլութիւնը ինձ հրամակեցիք ձեզ զարթեցնել:

ՀԱՆՍ (Պատմած): Մայրիկ, այդ թնձ պայծառափայ-  
լութիւն է. . . Զը լինի թէ պարինցը մեզ մօտ հիւր է. . .

ՍԵՆԵԿԱՊԵՏՐՈՒ: (Նորու հանդաւերից վեր առշլավ) Զերդ  
պայծառափայլութեւն, չէք կամենում վեր կենալ:

ՀԱՆՍ: (Մէտ առնի առաջամ դորս ինչ գլուխը վեր առշլավ և  
դարձնել պատճենը) Դարձեալ պայծառափայլութիւն: Տէր  
ողօրմեամ: Տօ, դուք նվ էք, այսինքն դուք այդ մամ հետ  
էք խօսում:

ՍԵՆԵԿԱՊԵՏՐՈՒ: Զերդ պայծառափայլութեան հետ,  
— իմ տէր պըինց Հերմանի հետ:

ՀԱՆՍ (բարս է լաւած պէտիցը և բաշմբանի վերայ նադելավ  
այս իրան այս իրան է նոյնաւ): Տէր Աստուած, դու ինձ վրկի՛  
ազատէ, աջն ու խաչն իմ վերայ լինի. . . այս մըտեղ եմ  
ես: Այս մըտեղ են. . . այս ինչ է նշանակում:

ՍԵՆԵԿԱՊԵՏՐՈՒ: Կարելի է թէ ձերդ պայծառափայ-  
լութիւնը վատ երազ էք տեսել:

ՀԱՆՍ: Երազ. . . (Երազ շուռ պալով): Եթէ այդպէս է,  
ուրեմն շատ ախորժելի երազ է. . . (Իսր այսաջները տաշտած է,  
շրերին յետն է տառած, յետներից հրա է տառած և չիլ պարուած է):  
Վայ, վայ, ցաւեց. . . Ո՛չ, ես քնած չեմ: (Բարձր յայնու,  
ունց վր ինալով): Դ սէր Աստուածոյ, պարոններ, ասացէք  
խնդրեմ, ասացէք, ես լինչպէս այստեղ ընկայ: Ում հետ  
ունեմ պատիւ խօսելու. . .

ՊՐԻՆՅ: Պըինց, այդ ինչ է եղել ձեզ. . . դուք ձեզ  
ամենից մօտիկ մարդկանցը չէք ճանաչում: Ահա, մենք  
— Զերդ պայծառափայլութեան երկու սպասաւորներն  
ենք, ես—գրաֆ Ալտեգրոն եմ. . .

Ֆ. ԼԱՌԻԲԵ: Ես—գրաֆ Լառուքին եմ:

ԲԺԻՇԿ: Խոկ ես պատիւ ունեմ ձեր պալատումը  
բժիշկ մենք:

Ա.ՏԵՆԱ.ՊԵՏՐՈՒ: Ես ձերդ պայծառափայլութեան խոր-  
հըրդական ատենապետ եմ:

ՍԵՆԵԿԱՊԵՏՐՈՒ: Խոկ ես ձեր խոնարհ ծառան եմ և  
ձերդ պայծառափայլութեան սենեկապետ:

ՀԱՆՍ (առջած նոյնաւ է նոյն վերայ և նորանոնշերի խօսելուց)

յեղոյ, նորն ևս նոյն խօսելու իրանաւ է): Խոկ ես, խոկ ես. . . Տօ,  
խոկ ես նվ եմ. . .

ՊՐԻՆՅ: Երկե թէ ձերդ պայծառափայլութիւնը  
մտքներումդ դրել էք, որ այսօր մեզ վերայ ծիծաղէք. . .  
խոկ ուրիշ կերպ լինչպէս կարելի է մոռանաք ձեզ գո-  
նեայ մի ըովէ անդամ, որովհետեւ դուք — պայծառա-  
փայլ Հերման պըինցն էք:

ՀԱՆՍ: Խնչպէս ասացեք . . . Ես — պըինց Հեր-  
մանն եմ. . .

ՊՐԻՆՅ: Այս, հապա դուք ուրիշ նվ պէտք է լինէք:

ՀԱՆՍ (խոչ երան): Ո՛չ, այդ խոկապէս կախարդու-  
թիւն է: — Ես կախարդուած եմ: Միթէ ես պըին . . .

Թահոն. . . մտածելն անգամ զարհուրելի է. . . (Յանու-  
աբ ծիծաղէլով) Հըմ. . . Հըմ. . . սա բոլորովին վնասա-  
կար բան չէ, մինչեւ անգամ լաւ է. . . ինձ, Աստուած  
վկայ, աւելի ցանկալի է պըինց լինել, քան թէ կօշկա-  
կար: (Բարձր յայնով) Պարնայք, ներեցէք. . . Բայց երե-  
ւում է թէ դուք կամենում էք ինձ վերայ ծիծաղէլ. . .

ՊՐԻՆՅ: Ուվ կը համարձակուի, Զերդ պայծառա-  
փայլութիւն. . .

ՀԱՆՍ: Դէ, դա արդէն չափեցը դուրս է. . . Սա  
ինձ մի անբնական մի բան է երեւում. . .

ՊՐԻՆՅ: Բացայաբուցիցն ք, պըինց. . .

ՀԱՆՍ: Հաւատացնում եմ ձեզ, որ ես պատիւ չու-  
նեմ ձեր պայծառափայլ պըինց լինել. ընդհակառակը  
ես մի չնչին մարդ եմ. . . Ես — կօշկակար եմ (Ամէնու-  
աբ յանաւ էն): Դուք այդ ինչն էք զարմանում:

ԲԺԻՇԿ: Տէր Աստուած: Երկե թէ պընցի ուղեղի  
որութիւնը խանգարուել է:

ՀԱՆՍ: Այս, այս, ես ոչ այլ ինչ եմ, եթէ ոչ կօշ-  
կակար Հանսը: Քազաքս մէջը ամեն անպիտան սրե-  
կայ, ամեն անպիտան լակոտ ինձ ճանաչում է. . . (Նոյե-  
լու Պընցի և Ֆ. Լառուքի վերայ) Հայ, ներեցէք, պարոնայք,  
դուք էւ էք ինձ լաւ ճանաչում:

ՊՐԻՆՑ: Այդ լինչ մի մեծ բան է, Զերդ պայծառափայլութիւն, մենք այսքան տարի ծառայում ենք Զերդ վեհանձնութեան առաջին. . .

ՀԱՆՍ: Բայց դա ուրիշ բան է: 25 որ դուք նոր, այս երեկոյ, գործատանը ինձ մօտ էիք. . .

ՊՐԻՆՑ (Ծիծովով): Գործատանը ձեզ մօտ. . . դուք այսօր շատ ոգևորված էք, Զերդ պայծառափայլութիւն. . .

ՀԱՆՍ: Այժմ հոգով ասացէք, դուք երեկոյեանը կօշակարի մօտ չէ՞ք, այն էլ մի հասարակ կօշակարի մօտ:

ՊՐԻՆՑ: Ճշմարիտ էք ասում, պըննց: Երբ որ դուք, սովորաբար, ճաշկցը յետոյ պառկեցիք քնել, մենք գնացինք քաղաքումը զբունելու, այդ ժամանակը, մի արհեստաւորի մօտ մտանք, ուր գրափ լառւքէն եւր համար մի զոյգ կօշիկ ձևել տուեց. այդ տեղ մենք մի քաջ և երեստասարդ տղայ տեսանք և մի պառաւ կնիկ — որ նորա մայրն էր.

ՀԱՆՍ: Ահա, տեսնում էք, տեսնում էք: Այդ հենց ես և իմ մայրս էինք:

ՊՐԻՆՑ: Դուք իսկապէս մեզ վերայ ծիծաղում էք, ձերդ պայծառափայլութիւն:

ՀԱՆՍ: Իսկ դուք լինչպէս էք հաւանում այդ երեստասարդ տղային:

ՊՐԻՆՑ: Շատ քաջ, ուրախասիրտ տղայ է. . .

ՀԱՆՍ: Հը, ես եմ, ես:

ՊՐԻՆՑ: Փոքը ինչ լիմար է. . .

ՀԱՆՍ: Այսինքն, լինչպէս թէ լիմար է:

Ֆ. ԼԱՌԻԲԻ: Բայց նա ճարպիկ է և կտրիճ. . .

ՀԱՆՍ: Սպասիր. . . բայց նա ձեզ տարաւ սրճարան. . .

Ֆ. ԼԱՌԻԲԻ: Այս, և ես նորան այն տեղ բաւականին ուրախ ընկերութեան մէջ թողի ու գնացի. . .

Բայց ձերդ պայծառափայլութիւնը այդ լինչպէս էք լիմարել:

ՀԱՆՍ: Ես շատ լաւ գիտեմ, նորան այն տեղ լաւ են պատիւ տուել և լիմարել են ոչ թէ ապրելու, այլ մեռնելու համար:

ՊՐԻՆՑ: Այդ շատ զարմանալի բան է, բայց դուք այդ լինչպէս իմացը բազմարանիցը չը վերկենալով:

Ֆ. ԼԱՌԻԲԻ: Մենք իսկոյն կընկներիս վերայ յետ դարձանք, դուք դեռ քնած էիք. այս զարմանք բան է. . .

ՀԱՆՍ (շուրջ դաշտ, և երես կոր ինչ ունի հասարակացնան անելով): Իրաւ, որ զարմանալի է. . . Հենց այն միենոյն պատմութիւնն է, որ մենք իմ մօր հետ կարգացինք. . . ահա, թէ պարսկաստանումը մէկ անգամ լինչ պատահէլ. կախարդութիւն, հոգեփոխութիւն. . . հասկանում եմ, իմ հոգիս պլնցի մարմնի մէջն է մտել, իսկ նորա հոգին իմ մեղաւոր մարմնի մէջը. . . Դէ, պաինցը այժմ լաւ տուգանքի մէջ է. . . Այսուամենայնիւ, մարդ ուղարկեմ իմ անշնչացած մնացորդներիս քամակիցը: (Ծանր ու բարձր տուած է ծառաներին) Ե'յ, լինչպէս է ձեր անունը. . . (Վախճանելով, ծառան համարները նոց է գցուած և առավարութեանով պարագաները) Խնդրեմ դուք գնաք սրճարան և ա. էք, որ կօշկակար Հանսը այս ըստիս ինչ մօտ գայ. . . Նա, կարծեմ, թէ դեռ քնած է. . . (Առաջին շային) Բան չը կայ. . . վեր կացրէք նորան, նա էլ մի մեծ բան չէ: Թող շատ չը փօռէ եր մէջ:

Լին ԾԱՌԱՅԻ: Պատիւ ունեմ յայտնելու ձերդ պայծառափայլութեանը, որ այդ կօշկակարը բոլորովին չի կարող այս տեղ գալ, — նա դիակ դարձած, անշնչացած, արբած վեր ընկած էր, ես ինքս աչքով տեսայ նորան:

ՊՐԻՆՑ: Եւ սրճարանի տէրը հրամայեց, որ նորան տուն տանեն իւր պառաւ մօր մօտ:

ՀԱՆՍ: Այս, ահա քեզ ցաւ ու կըակ. . .

Ինչպէս մի պընցի՞։  
ՊՐԻՆՅ. Ո՛չ, ինչպէս կօշկակարի։  
ՀԱՆՍ. Տէր Աստուած։  
ՊՐԻՆՅ. Զէ՞ որ նա ինքը պըինց է։  
Կօշկակար. . .  
ՀԱՆՍ. Զէ՞ որ դա ես եմ։  
ՊՐԻՆՅ. Ո՛չ, նա է։  
ՀԱՆՍ. Եւ նորան մօր մօտ լինցու տարան։  
ՊՐԻՆՅ. Նորան կօշկակարի մօր մօտ են տարել։  
ՀԱՆՍ. Իմ մօր կեանքը ինձի թանկ է։  
Աշխարհումս ամեն բանից։  
Բայց չը գիտեմ լինչ է վճռած։  
Նորան էպուց Արարչեց։  
Երբ կը զարթնէ մեր պըինցը,  
Բարկութիւնից կը տրաքվի։  
Ա՛և, Տէր Աստուած, ես լինչ անեմ։  
Նա իմ մօրը կը սպանի։  
Ո՛չ, յայտնի բան է, չեմ կամենում պըինց լինել։  
Ա՛յ հոգի, հեռացնիք, դուքս ել, կորիք իմ մարթնից,  
կորիք. . .

ԲԺԻՇԿ (Նոր չէ բառաւած է): Թողէք, ձերդ պայծառափայլութիւն։

ՀԱՆՍ. Սա լինչ է տղբուլիի պէս կալել ու պոկ չէ գալիս. մինք հարցնող լինի թէ լինչ է ուգում ինձանից. . .

ԲԺԻՇԿ: Պընց, ներեցէք. . . ես մինչև այժմ լուցի և ովնչ շասացի, կաթելով, որ այդ զարմանալի ձառնը վրկովուող և անհանգիստ անող երազների հետեանք են, բայց այժմ հաւատացի, որ ձեր ջղային բովանդակութիւնը, cerebralis սրտս, սաստիկ խանգարված է երակդ այն գրութեան մէջն է, որ անպատճառ հարկաւոր է շուտով արիւն թողնել: — Ե՞ս, տղայք: (Ծառանէլը և որուն շնորհուելը դուրս են լաւուն և շանունուուն են Տէջ ալեւով վերայ. Էժեւը ինչոք Գրանից հանուած է):

ՀԱՆՍ. Այս լինչ բան էր. . . Օրհնուածներ, ես

ձկան նման մի առողջ մարդ եմ. . . (Գարմանուլ նայուած է եղան վերայ) Վեր ձգիք, վեր ձգիք ձեռիցդ այդ դանակի կտորը. . . Իսկ ես չեմ թողնիլ, որ ինձանից արիւն առնեն. . .

ԲԺԻՇԿ: Դուք անպատճառ պէտք է թողնէք, որ արիւն առնեմ. . .

ՀԱՆՍ (չէր բուռ որդար որդար և ուղարկուլ): Բայց թողէք թէ ոչ ահա ես ձեզանից արիւն կը թողնեմ: ԲԺԻՇԿ: Իսկ, այդ ժամանակը ես, երբմ բժիշկ, երաւունք ունեմ հրամայել:

ՀԱՆՍ: Ե՞ս, բարբարս, դու ուգում ես արիւն խմբ, արիւն խմբէլ. . .

ԲԺԻՇԿ: Միայն թէ առաջ քսան ունիլ. . . Բունեցէք, սորան:

ՀԱՆՍ: Համբերեցէք, Համբերեցէք. . . իմ բժշկ, իմ աղաւնեալ, իմ քեռի, իմ հոգեալ:

Սպաննեցէք դուք ամենին,  
Շատ դուքեկան և քաջէք.  
Սպաննեցէք առողջներին,

Ո՛վ իմ բժիշկ սրտագէտ:  
Եւ այս ամեն մեր ազգային մէ թուրուն

Ննջարաններ, հանգստարանք,  
Բժիշկների շինուածներ են,  
— Նոցա արհեստի հետևանք:

(Լուս լինելու) Ձեր առաջին զուր է ողբաւ,  
Ձեր պընցին սիրեցէք,  
Պընց լինել համաձայն եմ,

Միայն արիւն խնդրեմ շառանէք:

ԲԺԻՇԿ: Համեցէք, ձերդ պայծառափայլութիւն, միայն այն պայմանով, որ եթէ միւս անգամ դուք կը սկսէք հաստատել ու պնդել այդ բանը, կամ թէ կ'արտասանէք մի խօսք, կօշկակար. . . այն ժամանակը, ներեցէք, ես բռնի կ'ստիպեմ, ինչպէս իմ պարտակա-

Նութիւնս ինձ հրամայ ում է: (Մասներին Տէ նշան է բալեւ—  
և նուա հետառաւ էն):

ՀԱՅՍ (Պետք ինդիւլ, ինչ իրան): Օֆ. . . Փառք  
Ասութոյ, հազիւ թէ աղասուեցայ. . . Այս ինչքան  
դժուար է եղել արքինց գառնալը. . . Այս թէ ես էլ լաւ  
յիմար եմ եղել հա, մինը ասող մինի թէ, տեսնեմ ին-  
չիցն թու վախենում. . . Զօռով ինքս ինձ շինում եմ  
կօշկա. . . (Բժիշկ, արդար աշակ դիւլ, յեղին եսուեր առելու ժա-  
մանաւ նորա յաւու բանում է): Բայց թողէք: Ես պլինց եմ:

ԲՈՂՈՐԾ: Կեցցէ պլինց Հերմանը:

ՀԱՅՍ: Ես. . . հա, կեցցէ. . . Այդ բանը հիւան-  
դութիւնից էս, իսկ ես իսկապէս փոքր ինչ ինձ մոռա-  
ցել էս, բայց բժիշկը. . . այս զարմանալի բժիշկը ինձ  
առողջացրեց, փրկեց իմ հիւանդութիւնից: Եւ այսպէս,  
պարոնաք, ես ձեր պլինցն եմ, ես երեկ երեկոյեան  
եկայ, այսպէս է թէ ոչ. . . իսկ իմ գալու պատճառը  
թնչ էր:

ՊՐԻՆՑ: Որ ձեր ամենապայծառ նշանածին, տես-  
նէք, որը այս քաղաքովք պէտք է անցնէ:

ՀԱՅՍ: Ասացէք լանգրեմ, սիրելի կոմս, դուք իմ  
նշանածին ձանաչում էք թէ ոչ:

ՊՐԻՆՑ: Ինչպէս չէ, պլինց: Ինձ էր յանձնված, որ  
խնամախօս դառնամ:

ՀԱՅՍ: Բայց թնչպէս է նա, հըմ. . . թէ որ գե-  
տէք նա մի բանի նման է թէ ոչ. . .

ՊՐԻՆՑ: Նա գեղեցեկի է:

ՀԱՅՍ (Իշխէ վրա շուր գալու): Այս, Մարգարիտ ջան  
— մնաս բարով. . . Ես մեղաւոր չեմ, քաղաքական յա-  
րաբերութիւնները. . . բժիշկը. . . ափսան, իսկ ես ու-  
սիշ վերայ պէտք է պատկում:

ՊՐԻՆՑ: Բայց իշխանութիւն իրաքանչեւր որպէտ գա-  
լու վերայ է, և ես համարձակվում եմ նկատել, որ ձերդ  
պայծառավայլութեան շորերը. . .

ՀԱՅՍ (Իշխէ հանելու): Դուք ձշմարիտ էք ասում:—

ՍԵՆԵԿԱՎԵՄ, թնչ պէտք է հագած: Մի տուր ինձ  
Փըսկս է. . .

ՍԵՆԵԿԱՊԵՏ: Աստղովն էք հրամայիւմ:

ՀԱՅՍ: Բաս առանց աստղի, այ դու տիսմաք:  
(ՍԵՆԵԿԱՊԵՏ ուսեւով ուելին ժաղաւէնը անց է հոցնամ և հոկա-  
ուն իրում վերա է հոգինամ): (Ինչն իրան) Ահա թէ թնչ կը  
նշանակէ լաւ Փըսկը, լաւ ժապաէնը ու աստղը. . .  
Զգում եմ, իրաւի, իմ մէջս մի պատութիւն, մի հար-  
կաւորութիւն եմ զգում. . . (Գէկւան է ու գովան է) Եւ ես  
թնչպէս կարող էի մատծել, չիմարս, որ ես կօշկա. . .  
(Բժշկ վրա ական նայում է) որ ես պլինց չեմ. . . (Բժիշկ հո-  
գինամ է) Իմ բժիշկ, ձեր ձեռքքը, միւս ձեռքքը. . . եր-  
կուսն ես: Չի որ դուք ինձ հոգի տուիք, բժշկեցիք. . .

ԱՏԵՆԱՊԵՏ (Դուք է լաշամ լուլեւը յաւակ): Ձերդ պայ-  
ծառափայլութիւն, չի ք կամենում. . .

ՀԱՅՍ (առանց շուր գալու): Կամենում եմ. . . Օհ,  
եմ ատենապետ: Իսկ դուք թնչ էք կամենում:

ԱՏԵՆԱՊԵՏ: Դուք սովորաբար, ընթրիքից առաջ  
հրամայում էք տուած խնդիրները վճռել և ստորա-  
գրել. . .

ՀԱՅՍ: Ընթրիքից առաջ. . . Այսօր ես, սիրելիս,  
տկար եմ, այսինքն չեմ կարող աշխատել. իսկ ընթրիքից  
վերայ, ներեցէք, կը լինեմ. . .

ԱՏԵՆԱՊԵՏ: Այդ թղթերը կարելի է մի առժա-  
մանակ թողու, — նոցա էգուց էլ կարող ենք կատարումն  
տալ:

ՀԱՅՍ: Ուրեմն դատարկ բաներ են:

ԱՏԵՆԱՊԵՏ: Ամենադատարկ, — խեղձերի օգնու-  
թեան մասին է:

ՀԱՅՍ: Ի՞նչ. . . Այդ թնչ ասիք դուք. . . Բայց դուք  
գիտէք, որ օգնութիւնը և ոչ մի ժամանակ յիստաձգու-  
թեան չի կարող սպասել, որովհետեւ, այն լիեղձը, որ  
քաղցած է, չի կարող համբերել. . . և ով որ շուտով  
օգնութիւն կը տայ, նա միենոյն է թէ, երկու այնքան է

տալիս. այս բանը ՚ի նկատի ունեցէք և ինձ միւս անգամ չխօսացնէք այդպիսի բանների համար. . . Հասկանում էք ՚ինչ եմ ասում:

ՊՐԻՆՑ (Տէ ՚ո՞չ վէրայ շուր գուրով): Կեցցես: (Համար առաջ է) Պրինց, այդ ձեր բարեսրտութեանը պատիւ է վերաբերում:

ՀԱՆՍ (Ժամանելով): ՚ի, առաջ քաշեցէք սեղանը: Կոմս, նստեցէք այստեղ, առանց քաշուելու. . . ՚ի միամին այս գործերի վերայ խօսենք: (Արձակութեան առաջ է) Կարգացէք խնդրեմ, միայն թէ կարճ կտրեցէք. այսքանս թէ ՚ինչ է կամենում ասել:

ԱՏԵՆԱ.ՊԵՏ (Թուլւը այս ՚ո՞չ այս ՚ո՞չ շուր գուրով): Խեղճ որբեացը կնիկը տասնուշինդ թուման է ուզում, — նա հարկաւորութիւն ունի. . .

ՀԱՆՍ (Կառաջ ՚ո՞չ եւ): Հասկանալի բան է, որ հարկաւորութիւն ունի, եթի խնդրում է: Դէ, ՚ինչքան որ կարելի է, կարճ կտրեք, օրհնումք:

ԱՏԵՆԱ.ՊԵՏ: Այս տեղ է գրուած բժշկի վկայաթուղթը. . .

ՀԱՆՍ: Այս շատ հարկաւոր է. . . Տալ դորան երեսուն թուման, բայց թող բժշկին ովինչ ըստայ: Շարունակեր:

ԱՏԵՆԱ.ՊԵՏ: Կունստ այգեապանը, ընտանիքով ծանրաբեռնած. . .

ՀԱՆՍ: Լաւ, գիտեմ, գիտեմ, զինդ երեխայ ունի: Նորան քսանեւհինդ թուման տալ, և նորան կամէք, որ եւրաքանչւր ամիս իմ գանձարանից կը ստանայ էմ տասը տասը թուման. . . Ես այդ մարդին անձամբ ճանաչում եմ:

ՊՐԻՆՑ: Պրինց, կը համարձակուեմ հարցնել, դուք նորա հետ ինչպէս ծանօթացաք:

ՀԱՆՍ: Օրհնումք, եթի ես կօշկա. . . (Բժիշկ, որ ՚ո՞ր հօր ՚ո՞գնոծ էր, ՚ո՞ր երակ ՚ո՞գնոծ է) կը առ. . . կը առ. . .

կրակոտ և ժիր ծաղիկներ էի սիրում. . . Հասկանում էք. . . մի չփոթէք. . . դէ, էլ ՚ինչ կայ այդ տեղ:

ԱՏԵՆԱ.ՊԵՏ: Այս վերջին թուղթը՝ ալստեղացիքաղական ատենի գրագրի խնդիրքն է. . .

ՀԱՆՍ (Վէր և աջ կողման): Եւ նորան, այդ խարդախին: Հրաժարել:

